## ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՅ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆՑ

# ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹԻՒՆ

# ՍՐԲՈՅՆ ՀՌԻՓՍԻՄԵԱՅ

*(Անտիպ Թատերգութիւն հանեալ 'ի Հասարակաց Գրատանէն Վենետկոյ)։*

(Տես Հատոր ԽԳ. էջ 211)։

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ

### ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՀՌԻՓՍԻՄԷ *միայնակ ելանելով 'ի պալատէն Տրդատայ։*

*Հռիփսիմէ.* *Մնայի կապեալ, գարշելի Տրդատ.*
*Ուսիր՝ զինչ իցէ հարսն Քրիստոսի,*
*Զօրութեամբ խաչի. բանտ իցէ քո պալատ,*
*Ուր քո ամօթ յայտնեսցի.*
*Դիւր ինչ կարծէիր զաղջիկ մի յաղթել,*
*Զսուրբ Հոգւոյն տաճար պղծել։*
*Խոնարհիլ իսկ քեզ է պիտոյ.*
*Տկար աղախին Աստուծոյ,*
*Կարօղ է զհսկայ պարտել,*
*Աներկիւղ յաշխարհէ, 'ի դիւաց, 'ի մարմնոյ.*
*Իսկ բաւական է, Տէր ամենախնամ,*
*Քո հարս անբիծ է պահեալ,*
*Է զպիղծ կռապաշտ խաբեալ բազում անգամ,*
*Քո անուն փառաւորեալ։*
*Ցանկութեանց իմոց գերազանց վախճան,*
*Լուր զձայն իմ տրտմական,*
*Տուր քեզ փութապէս հետեւել*
*Թէ կեցցեմ, տուր մեռանել.*

digitised by A.R.A.R.@

Լուծցի որմս այս եղծական, որով յաւէտ
Ի քէն դժուար է բաժանել։
Դուք 'ի բաց կացէք, դատն փափկութիւնք,
Պատիւ, խաբօղք անմտից,
Առաջօք բարիք, սուտ մեծութիւն,
Անըզգոյշ թովիչք սրտից,
Անցաւոր ստացուածք. զինչ յինէն կամիք,
Գարշք և ապականելիք։
Զյաւիտենականս խնդրեմ.
Զձեզ ընդ ոտիւք կոխեմ,
Լերուք իմ սրտէ հեռիք.
Ի բաց, ստեղծուածք.
Առ ստեղծողն անցանեմ։

## ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ՀՌԻՓՍԻՄԷ, ԿԱՐԷՆ

*Հռիփսիմէ.* Իսկ Կարէն գայ. մօտացիր, իշխան,
Բան առ քեզ ունիմ։
*Կարէն.* Առ իս՝ որ անարժան,
Մեղապարտ. ամաչեմ....
*Հռիփսիմէ.* Զմեղս քո գիտացի.
Գոհացիր զԱստուծոյ, զհաւատս Քրիստոսի
Մի յամեր ընդունիլ, որպէս և Տրդատ
Այլակերպեալ՝ ընկալցի յիւր պալատ.
Ցայժմ է կապեալ խաչի զօրութեամբ,
Որ կամէր պղծել գարշ ցանկութեամբ
Զսուրբ Հոգւոյն օթևան, ահագինն դիւաց.
Իսկ հասեալ է ժամ. վասն Աստուծոյ փառաց՝
Նոյն սուրբ խաչին յաներևոյթ կապից
Արձակեալ իցէ. եմ յիշող բանից։
Դու՝ զգոյշ լեր, Կարէն. որ ինչ հանդիպեսցի՝
Անահ մնասցես, վերջն ուրախ լիցի։
Այժմ գայ Տրդատ, ես առ հնձանս երթամ.
Անդուստ՝ ողջ լեր, առ փեսայ ընթանամ։ (Գնայ)
*Կարէն.* Խնդրեմ, հայցեմ..., Աներևոյթ լինի,
Եւ զիս երկբայ թողու։ Որ կապի
Աներևութաբար, Տրդատ զատեալ,
Զհաւատս Քրիստոսի՝ այլակերպեալ
Ընկալցի, և զիա՞րդ...

## ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

ՏՐԴԱՏ, ԿԱՐԷՆ

*Տրդատ.* Գնացէք, զինուորք,
Որ փախեաւ՝ զՀռիփսիմէ տանջանօք սպանէք.

digitised by A.R.A.R.@

Կարէն. Արքայ։
Տրդատ. Եթէ խօսիս, ես եմ յուսահատեալ.
Ես յապարանս իմ, թողեալ կապեալ՝
Զիս ծանակ արար, կախարդ լրբական։
Արամազդ, Անահիտ, սուտ էք ամենեքեան,
Որ 'ի նախատանաց զձեր Տրդատ փրկել
Չկարացիք. ամօթ. կին մի պարտել
Զյաղթող հսկայից. ո՜ սրտմտութիւն.
Զօրութիւնս ուր է, ուր քաջութիւն.
Պիղծ քրիստոնեայք, զայն հնարս ունիք
Առ 'ի սատակել զաշխարհս, գարշելիք.
Սատակեսցին։ Երկնիք, յիմ կեանս երդնում,
Թէ ձեզ խնայեմ, եթէ մի թողում
Ծնունդ դժոխոց։ (ԶԳայիանէ կապեալ ածեն երկու զինուորք)

## ՏԵՍԻԼ ՉՈՐՐՈՐԴ

ՏՐԴԱՏ, ԿԱՐԷՆ, ԳԱՅԻԱՆԷ, ԶԻՆՈՒՈՐՔ

Տրդատ. Աստ եւ ածել՝
Զկախարդապետ այս, զոր պարտ է այրել,
Ո՞վ ետ հրաման։
Մին'ի զինուորաց. Քրմապետ ուղարկէ,
Զի թէպէտ խրատեալ՝ զժողովուրդ խռովէ։
Տրդատ. Ընթացէք փութով, խստապինդ տանջանօք
Զարչարեցէք զնա, և հանդերձ ընկերօք՝
Սուր սրի սպանջիք։
Գայիանէ. Երթիցուք, գոհանամ։ (Գնայ Գայիանէ)
Լինիցիս և փութով Քրիստոսի բարեկամ։
Տրդատ. Զաղէր, և չդադարեա հայհոյել. երդուայ,
Հաւատարիմ եղէց. զմի քրիստոնեայ
Չթողից անսասան. կամիմ տեսանել
Թէ զնոսա Քրիստոս կարասցէ՞ փրկել.
Արեամբ նոցա կարմրի Վաղարշապատ.
Հաճեսցի աստուածոցն, և ինքն Տրդատ
Բարեբախտ լիցի. ինձ զինչ պարտ է
Զթագս այս տանել. ծիրանիս զինչ օգնէ՝
Եթէ զհրամանս կատարեցուցանել
Կարող ոչ եմ. եթէ մարտնչել
Հարկաւորիմ, միշտ եւ ամաչել
Ի յիմար խաչապաշտից. իսկ պատերազմել
Այլ որպէս մարթ է, Կարէն. բանք, ողոքանք
Ոչինչ օգնեն. տանջանք և խարազանք
Լիցին գործադրիչ։ Երբեմն եղև
Պիղծ Անակայ որդի, դու գիտես, Կարէն.
Առաքեալ Գրիգոր վկայ է. տանջանաց՝
Թէպէտ 'ի սկզբանէ՝ զօրութեամբ դիւաց

digitised by A.R.A.R.@

Երևեցաւ յաղթող, ապա խաչեցեալն
Զոր ասէր Աստուած, հանապազ գովեալ,
Մինչ քարոզեալ պաշտեալ 'ի նմանէ,
Զնա ոչ կարաց փրկել 'ի մահուանէ.
Զար գործոց իւրոց պատիժ ընկալեալ.
Եւ 'ի մէջ օձից 'ի վերայ արկեալ
Սատակեցաւ գարշն. և Հռիփսիմէ
Եթէ ոչ փոխի.... (Տիմաս մտանէ)

Տիմաս. Ապա կատարեալ է,
Մեռաւ իշխանուհի։

Կարէն. Արժան անմահ կենաց։

Տրդատ. Մեռա՞ւ Հռիփսիմէ...

Տիմաս Ի գիրս վիպասանաց
Հնոց և նորոց՝ գքաջութիւն նման
Ոչ ոք գտանէ. անցեալ ըստ պատահման
Ընդ մեծ փողոց՝ զամբոխ զինաւորաց
Յանկարծ տեսանեմ ընդ դահճաց.
Շուրջ պատեն զկուսին, առ ամենեսեանս
Գոչեն. Ըմբռնեցէք զայս փախստականս.
Առէք, հրամայեաց արքայ ըմբռնել
Զնոսա։ Ոչ ոք կամի զինաւոր՝ դնել
Զձեռն 'ի վերայ նորա, ոչ ոք իշխէ։
Աներկիւղ նա 'ի մէջ նոցա ճեմէ.
Մինչև ցհնձանս իւր իբրև հասեալ,
Որ կային առ դրան՝ զընկերս տեսեալ,
Զայն աւետեաց նոցա մատուցանէ.
Անփորձ կանայք, զգաստ կուսանք, ասէ,
Ցնծացէք այսօր մեծ խնդութեամբ,
Զի զհսկայ արքայն՝ խաչի զօրութեամբ
Հարեալ յաղթեցի, վանեցի զախոյեան.
Արիք ապա, արիք 'ի քաղաքն աննման
Հռոմ, ելէք զըղձալիս աւետիս տանել.
Հարսանիք են ինձ այսօր, տեսանել
Եկայք՝ զարդուք պճնեալք, փող հարէք,
Զհարսնական առագաստ պատրաստ արարէք,
Մուծէք առ փեսայն։ Եւ այլ նմանս
Զոր իբրև ասաց, թողեալ զկուսանս
Հեռագոյն՝ գնաց 'ի բարձր տեղի,
Ուր սկսաւ աղօթել՝ ըստ սովոր կերպի,
Առ իւր Աստուածն. իսկ հասեալ դահճաց՝
Յետ անասելի անթիւ տանջանաց,
Ոչ թողլով 'ի նմա մի անդամ մարմնոյ՝
Առողջ և անսասան, սպանին....։

Կարէն. Եւ սիրոյ
Որքա՞ն են նշանք Տրդատայ, եթէ...

Տրդատ. Կատարեա, Տիմաս. մեռա՞ւ Հռիփսիմէ։

Տիմաս. Կատարեցի, մեռաւ ըստ քում հրամանի։

Տրդատ. Պիղծ, զի՞նչ խօսիս, ես Հռովմայեցի զկոյս,

digitised by A.R.A.R.@

Զլոյս աչաց իմոց, զկեանս իմ կենաց,
Շիջուցանել...

Տիմաս. Արքայ, յաւիտեան կաց.
Զինուորքն ասացին, ինքն զարմացայ։

Կարէն. Եթէ մնացաք. ինքն ես լուայ
Զանօրէն պատուէր։

Տրդատ. Թէ ստուգիւ է,
Բոլորով արեամբ Տրդատայ՝ պիտոյ է
Սխալս այս ջնջել։ (Սուր առեալ կամի զինքն իւր սպանանել. արգե-

Կարէն. Արգելոք պիտոյ էր՝ [լուն Կարէն և Տիմաս)։
Եթէ Հռիփսիմէ ոչ հրամայեալ էր
Համբերել իսպառ...

Տրդատ. Զինչ դուք ասացիք...
Ինքն իշխանուհի գայ, փութապէս արիք.
Ի վերայ իմ գայ, և հանգերձ ընկերօք՝
Վրէժխնդիր տանջանաց, որովք և բրօք
Զարկեն, օգնեցէք...

Տիմաս. Ոչ ոք երևի։

Տրդատ. Այն կողմն դարձան։

Կարէն. Ընդդէմ երկնի
Դժուար է մարտել։

Տրդատ. Օգնականք, ասեմ,
Լերուք փութապէս, ո՛հ, մեռեալ եմ.
Անողորմ կուսանք՝ զմի բազուկ ինձ հանին։

Կարէն. Ի խելաց ելանէ։

Տիմաս. Զբովանդակ մարմին
Առողջ տեսանեմք։

Տրդատ. Ըզվէրս ես ըզգամ,
Զեր ծուլութեամբ՝ անբազուկ մնամ.
Աշխարհիկ արքայ։

Կարէն. Անձայն մարդ, ո՛հ,
Մնացեալ էիր՝ նախ քան զդժոխական
Զպատուէր տալ՝ զանմեղ կուսն սպանանելոյ։

Տիմաս. Կամաց քուն առնու. զնա ծածկել պիտոյ է։ (Տիմաս ծած-
Բարի է՝ թէ հանգչի յունայն երկիւղէ. [կէ զՏրդատ, որ ննջէ)։
Դիւրին առողջանայ։

Կարէն. Միշտ անհանգիստ իցէ.
Զազնիւ արիւնարբու, զպատուէրս Հռիփսիմեայ
Թէ ոչ պահէի, որպէս խոստացայ,
Ցերկար ննջէիր։

Տիմաս. Մեր արհամարհեալ՝
Ի սրտմտութիւն դառնայ. իսկ լեալ
Ականատես վկայ մահուան կուսին,
Եւ յոլով անգամ քրիստոնէից ազգին
Տեսեալ զքաջութիւն՝ զցանկալն տանջանաց,
Զկեանս անփոյթ առնելն, 'ի ձեռս դահճաց
Զիւր անձինս ընծայել, իմանալ չկարեմ
Զխորհուրդս նոցա. զմին յերկուցս՝ ասեմ՝

digitised by A.R.A.R.@

Ճշմարիտ լինի . թէ սոքա մոլորին
Կոյրք և յիմարք, թէ որով հաստատին՝
Մեծագոյն է ստուգիւ այլ աստուածոցն ։
Կարէն. Մեծ է հաստատապէս ինքեանց դժոխոցն.
Թէ Տէր՝ ինքնակալ դիւաց է՝ գիտացի,
Յորժամ առ կախարդ ըստ քո խրատի
Գնացի ընդ վայր ։ Բայց զքեզ աղաչեմ՛
Առ մարմին կուսին երթիցուք, փափաքեմ
Մեռանել 'ի վերայ.... (Կարէն կամելով ելանել՝ արգելանի 'ի
Քրմապետ. Մնացի՛ր աստ, իշխան. [քրմանէ՝ որ մտանէ)։
Փութապէս օգնել մեր ազգիս աւերման
Պարտ է. քակեալ է մեծ Վաղարշապատ,
Խարեալ ժողովուրդ, կորուսեալ հաւատ,
Ցրուեալ անմահից խորանք, փախեալք
Քրմունք, չարաչարք զօրք այսահարեալք,
Զմարմինս իւր ուտեն. ամենայն՝ գործ է
Գարշ քրիստոնէից. Գայիանէ, Հռիփսիմէ,
Ընդ այլ կախարդս որ այժմ մեռան,
Եւ ատելի գործոց զպատիժ ընկալան,
Եւ յետ մահու՝ զմեզ հալածել
Ոչ դադարեն. արքային յայտնել
Զբանս հարկաւոր է ։
Տիմաս. Թագաւոր բան ունի,
Սակաւ ինչ տկար՝ յաթոռ իւր հանգչի ։
Քրմապետ. Տարաժամ է հանգչել, յորժամ.... ո՜վ իշխան, (Քրմապետն [բացեալ շկաւուն՝ տեսանէ զՏրդատ խոզացեալ)։
Զի՞նչ աստ տեսանեմ. զի՞նչ այս է գազան.
փրկեցէք, աստուածք ։ (Փախչի քրմապետն)
Տիմաս. Ո՛վ երկինք, զի՞նչ է.
Բաց են դժոխքն.... (Տիմաս փախչի, և արգելու զնա Կարէն)։
Կարէն. Կա՛ց, փախչե՛լ. ամօթ է ։
Կուսանացն արեան վրէժխնդրութիւն
Այս է. ստուգապէս ճշմարտութիւն
Բանից Հռիփսիմեայ այժմ յայտնի ։
Այլակերպեա՞լ է Տրդատ, ընկալցի
Զհաւատ Քրիստոսի. ժամանակ և եհաս.
Մատիցուք առ նա. մի՛ երկնչիր, Տիմաս,
Վերջին ուրախ լիցի, կոյսն խոստացաւ ։
Բանաւո՞ր մնաց, և թէ իմացմա՞ւ
Զոր մեք ասացաք. տեսցուք, խնդրեմք.
Եւ, Տրդա՛տ, լսե՞ս զոր այժմ ասեմք,
Ցո՛ւտ է թէ ճշմարիտ ։ (Ստորասէ գլխով խոզն)
Տիմաս. Գլխով ստորասէ՝
Թէ հաւանի բանիս, նշանք ցուցանէ
Թագաւոր ։
Կարէն. Բարկանայ կոչիլ այս անուամբ.
Թերևս չկամի՝ զոր հպարտութեամբ,
Ուժով՝ կամելով 'ի կամս իւր ածել

digitised by A.R.A.R.@

Զաւրն իւր հալածեալ. խոնարհ եղեալ ջնջել
Իմաստնապէս ջանայ։

Տիմաս. Տրդատ, ապա խնդրեմք
Ցոյց մեզ նշանք՝ զիարդ կարեմք
Քեզ օգնական լինել այս նեղութեանս։

Կարէն. Զինի, բացատէ գլխով, և նշանս
Տայ՝ թէ չկարեմք։ Ուրեմն ասելի է՝
Թէ ուստի է մնաս՝ դեղ և եկեսցէ։ (Գայ տղայն 'ի Խոսրովդուխտէ)։
Իսկ զինչ կամի տղայս

Տղայն. Խոսրովիդուխտ
Զիս առ քեզ ուղարկէ. զայս և թուղթ
Խնդրէ թէ փութապէս կարդաս։ (Կարէն առնէ զթուղթն և կարդայ)

Կարէն. Կարենի
Ողջոյն Խոսրովիդուխտս. քոյ թագաւորի
Հայոց Տրդատայ, — ի գիւղս՝ իմացայ
Թէ 'ի Վաղարշապատ — իմ եղբայր Տրդատ
Ի կերպարան խոզի — փոխեալ տառապի։
Նա և 'ի տեսիլ — Գիտացի՝ թէ ապրիլ
Միայն կարէ — ի ձեռն Գրիգորէ,
Որ Անակայ որդի, — վասն անուան Քրիստոսի
Յարքայէ տանջեցաւ. — Եւ ապա եդաւ
Ի խոր վիրապի. — Ուր կենդանի
Յետ երեքտասան ամաց, — Երկինք զնա պահեաց։
Այժմ հանեալ — Եւ առ քեզ ածեալ
Մուծ եղբօր յապարան. — Եւ որպէս է արժան՝
Զնա պատուով ընկալ. — Եւ ես աստ գալ
Թէ կարենամ՝ — Անձամբ փութանամ։ Ողջ լեր։

Տիմաս. Զինչ գրէ... Գրիգոր... է կենդանի...

Տղայն. Կենդանի և առողջ, և ինձ հետևի.
Օտայ զնա ածէ, որ զնա եհան
Ի վիրապէն անտի, յետ կուսանաց թաղման,
Զոր ամբողջ գտեալ զմարմինս՝ կատարեաց.
Թէպէտ եղեալ էին կերակուր գազանաց։
Աստ գալ փութանայ, և ոչ է հեռի,
Զի վասն քարտիզիս՝ առաջ վազեցի։

## ՏԵՍԱՐԱՆ ՎԵՐՋԻՆ

Ս. Լուսաւորիչ, Տրդատ, Կարէն, Օտայ, Տիմաս

Օտայ. Հրաշագործ մարդ, սիրեալ յերկնից,
Զոր յետ յոլով ամաց և 'ի մէջ օձից՝
Ի վիրապ գտայ անփորձ և անսասան,
Մեր բժիշկ վիրաց՝ քեզ ածեմ, իշխան.
Նեղեալ արքային միտս և սաստ
Բազում աղաչանօք՝ զի դարձուցէ զնա
Ի կերպ վերստին. մեր և իշխանուհի
Խնդրէ զայս 'ի քէն։

digitised by A.R.A.R.@

Կարէն. Օրհնեալ լիցի
Ճշմարիտ Աստուած և անուն նորին.
Օրհնեալ եկեալ՝ զոր 'ի մեզ հաստուցին
Գժոխքն՝ պատուհաս. զթած, կամեսջիր
փարատել 'ի մէնջ.

Լուսաւորիչ. Աստուծոյ ճշմարտի
Որդին՝ Քրիստոս, համագոյակից Հօր,
Անժամանակակից, անմահ և հզօր՝
Ձեզ օգնական լիցի. նոյնա. ամենայն
Բարի ինչ լինի. տեսցուք իսկ արքայն.

Օտայ. Ի՞նքն ես, Տրդատ, ի՞նքն ես, արքայ
Ամենաքաջ, յաղթող, առասեալ հսկայ՝
Զօրութեան յաղագս, ի՞նքն ես. հաւատամ՝
Զի որ երևեցաւ քում քեռ հինգ անգամ,
Մի անձանօթ այր՝ զքո թշուառ փոփոխմանէ
Տեղեկացեալ արար. յիմարութիւն է
Տարակուսիլ. յաւէտ իսկ ոչ երևիս.
Զքեզ, 'ի քեզ խնդրեմ.

Լուսաւորիչ. Այս կերպարանէս՝
Տեսէք, զինչ իցէ մեղք. հանապազ փոխի,
Թէպէտ ծածկապէս մեղուցեալ, հոգի՝
Որ աղտտեալ իւր ստեղծողի կերպարան,
Յոր արարեալ էր, զարարած եղական
Եդեալ 'ի սիրտ իւր՝ փոխանակ Աստուծոյ,
Ստուգիւ խոզապէս թաթաւի՝ 'ի տղմոյ
Անբան ցանկանայ. Ապա զգոյշ լերուք,
Եւ 'ի ձեր արքայի պատժոյ՝ դուք ուսարուք
Զկուռս անարգել, անզգայ պատկերաց
Ոչ երկրպագել, զգործս մարդկան ձեռաց
Մի՛ ասել աստուածս. Աստուած է մի,
Անստեղծ, անժամանակ, անհաս, անքննելի.
Անձամբք եռեակ, իսկ բնութեամբ
Մի, կամօք, մտօք, մի է զօրութեամբ.
Հայր և Որդի և սուրբ Հոգի՝
Անուանք են անձանց. իսկ այս Որդի,
Իւր Հօր հաւասար, վասն փրկութեան
Մարդկային ազգի՝ մեզ եղեալ նման,
Յանարատ կուսին յարգանդի մարմնացաւ.
Եւ վասն մեր, թէպէտ անմեղ, մեռաւ.
Բայց 'ի մեռելոց փառաւոր յարուցեալ,
Եւ յերկինս՝ իւր Հօր ընդ աջմէ նստեալ.
Այսպէս է. Տրդատ, հաւատա՛. Հաւատալ
Առաջ պիտոյ էր.

Օտայ. Թողութիւն արա.
Գիտեմ զինչ է մարդ. զհաւատ հայրական
Իւրաքանչիւր պահէ, մոլորական
Իցէ թէ ուղղափառ.

Լուսաւորիչ. Քննել իմաստնոցն

digitised by A.R.A.R.@

Պարտ է զգործս իւր, և յաղագս հաւատոյն
Որ մեծամեծ է բան, յորոյ փրկութիւն
Կամ հոգւոյն կորուստ կախի, քննութիւն
Անձուկ հարկաւոր է. և ճշմարտութեան
Առաւել հաւանիլ քան հօր իւրեան։ (Խոսրովիդուխտ մտանէ)

Տիմաս. Բայց իշխանուհի գայ։

Խոսրովիդուխտ. Ո՛վ եղբայր,
Ո՞ւր ես. ըղձալի ամենագութ այր,
Ողորմեա՛ց, աղաչեմք։

Լուսաւորիչ. Իմ բան այս չէ,
Խնդրեցէք յԱստուծոյ, զի Աստուծոյ գործ է։

Խոսրովիդուխտ. Խնդրեմք սրտիւ, թէպէտ չգիտեմք
Ո՛վ քո Աստուածն իցէ. չճանաչեմք,
Բայց զնա ճանաչել կամիմք, և պաշտել՝
Որպէս վայել է, և տաճար շինել.
Միայն ողորմեա՛ց, և մի՛ յիշեր
Զոր եղբայրս իմ 'ի քեզ մեղաւ. տգէտ էր,
Թո՛ղ։

Լուսաւորիչ. Ես թողի. ըստ մեր օրինաց՝
Համբերել սակաւ է հալածողաց,
Սիրել և պարտիմք։

Խոսրովիդուխտ. Ապա մեր Տրդատայ
Լեր օգնական։ Եղբա՛յր, դու ինքն խնդրեա.
Լսեա։

Լուսաւորիչ. Բաւական է, զղջա՛նայ, տեսանեմ,
Վասն մեղաց իւրոց. դարձանէ, ճանաչեմ,
ԶՔրիստոս Աստուած. ուրեմն եղիցի
Ըստ հաւատոց նորա, և այժմ դարձցի
Ի կերպ վերստին։ (Այժմ ելանէ և առնա երթայ)

Տրդատ. Ծառայ մեծ՝ Աստուծոյ
Անճառի, անբաւի, անեղի, միոյ,
Զիա՞րդ կարեմ զքէն ես գոհանալ,
Զի՞նչ է շնորհս այս։

Լուսաւորիչ. ԶԱստուծոյ գոհանալ
Պարտ է միայնոյ. իսկ այս Տէր
Այնքան բարի, գթած, մարդասէր,
Կամիք, տեսանեմ, զի՞նչ իցէ՝ գիտել.
Երթիցուք յապարանս, կամիմ ուսուցանել։

Տրդատ. Երթիցուք. այսօր մեք ամենեքեան
Եդեալք 'ի ձեռս, Հայք և Հայաստան,
Քոց կամիմք հետևիլ աստուածահաճոյ կամաց.
Եւ հնազանդիլ քո սուրբ հրամանաց։

ՎԵՐՋ

digitised by A.R.A.R.@